

Մ Ե Ր Ն Պ Ա Տ Ա Կ Ը



Թէ ինչո՞ւ նպասակ դրինք գրել Քիւրդերու պատմութիւնը :

—Մեր խորին համոզումն եղած է՝ թէ Ազգերու եւ Ժողովուրդներու փառաբանութեան չափը հակակշռելով անոնց ու անոնց սիրող իշխանութիւններուն, իրենց պետական ձեւին, կառավարական ուղղութեանը, միշտ Ազգն ու Ժողովուրդն է եղեր որ պահեր է իր ամբողջ դիրքը. իսկ իշխանութիւնը պարտաւորուել է վերջապէս երթալ անոնց համընթաց՝ եթէ չէ եղեր համամիտ անգամ:

Պատմականօրէն հակասագրականութիւնն ունենալով սպրեւելու ցեղի մը հետ որ Քիւրդերն են, որոնց փառաբանական աստիճանը չափազանց ծայրագոյն տարբերութեամբ հետի է մերինէն, ինչ ալ որ լինի մեր երկուքիս բաժին ինկնող իշխանութեան ու կառավարութեան ձեւն ու կամքը, ոչ մէկ կերպով կարելի չպիտի լինի բառնալ այն ամեն անախորժ, տհաս, ու շարունակական բնաւորութիւն ստացած դէպքերն ու արգելները՝ որոնք կուզան սպառնալու մեր փառաբանութեան, մեր կենցաղին ու յառաջդիմութեանը,

Իմ կարծիքով պէտք է դնել փառաբանութեան հիմք մը Քիւրդերու համար, ու դնել այնպէս՝ որ համապատասխանէ անոնց ցեղի զարգացման, առանց սակայն վնասելու իրենց իսկական շահերը: